

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38-1»**

ք. Երևան

«20» 07 2017թ.

ՀՀ մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արիովշին» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքները** (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **15 նոյեմբեր 2017 թ.:**

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր

կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեոտուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են նախագծանախահաշվային փաստաթղթերում:

3.4.10 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված N 4) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փափստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝

պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից ստանձնում է լեկտորնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Աշխատանքը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 4.2-րդ կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պենտական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝

Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 100 877 160 (հարյուր միլիոն ութ հարյուր յոթանասունյոթ հազար հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, որից 16 812 860 (տասնվեց միլիոն ութ հարյուր տասներկու հազար ութ հարյուր վաթսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին՝ 20 499 600 (քսան միլիոն չորս հարյուր իննսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ որից 3 416 600 (երեք միլիոն չորս հարյուր տասնվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին՝ 11 199 600 (տասնմեկ միլիոն հարյուր իննսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ որից 1 866 600 (մեկ միլիոն ութ հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

4-րդ չափաբաժին՝ 14 349 600 (տասնչորս միլիոն երեք հարյուր քառասունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ որից 2 391 600 (երկու միլիոն երեք հարյուր իննսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

6-րդ չափաբաժին՝ 15 930 000 (տասնհինգ միլիոն ինը հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ՝ որից 2 655 000 (երկու միլիոն վեց հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

7-րդ չափաբաժին՝ 18 799 200 (տասնութ միլիոն յոթ հարյուր իննսունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ՝ որից 3 133 200 (երեք միլիոն հարյուր երեսուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

10-րդ չափաբաժին՝ 2 499 960 (երկու միլիոն չորս հարյուր իննսունինը հազար ինը հարյուր վաթսուն) ՀՀ դրամ՝ որից 416 660 (չորս հարյուր տասնվեց հազար վեց հարյուր վաթսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

11-րդ չափաբաժին՝ 17 599 200 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր իննսունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ՝ որից 2 933 200 (երկու միլիոն ինը հարյուր երեսուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.1.1 Պայմանագրի գնից՝ 60 000 000 (վաթսուն միլիոն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար, ընդ որում՝

1-ին չափաբաժնի մասով՝ 12 577 239,6 (տասներկու միլիոն հինգ հարյուր յոթանասունյոթ հազար երկու հարյուր երեսունինը դրամ, 6 լումա) ՀՀ դրամ:

2-րդ չափաբաժնի մասով՝ 6 607 764 (վեց միլիոն վեց հարյուր յոթ հազար յոթ հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ:

4-րդ չափաբաժնի մասով՝ 8 466 264 (ութե միլիոն չորս հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ:

6-րդ չափաբաժնի մասով՝ 9 398 700 (ինը միլիոն երեք հարյուր իննսունութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:

7-րդ չափաբաժնի մասով՝ 11 091 528 (տասնմեկ միլիոն իննսունմեկ հազար հինգ հարյուր քսանութ) ՀՀ դրամ:

10-րդ չափաբաժնի մասով՝ 1 474 976,4 (մեկ միլիոն չորս հարյուր յոթանասունչորս հազար ինը հարյուր յոթանասունվեց դրամ, 4 լումա) ՀՀ դրամ:

11-րդ չափաբաժնի մասով՝ 10 383 528 (տասը միլիոն երեք հարյուր ութսուներեք հազար հինգ հարյուր քսանութ) ՀՀ դրամ:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 քանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20 դեկտեմբերի 2017 թ.՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է՝

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով

¹ Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ, ապա ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված համապատասխան չափաբաժնի գինն է

պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած

պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միջակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.8 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Սույն պայմանագիրը կազմված է 42 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական

օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը.

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Վճակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,

«Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչությունում



Ս. Մուրադյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Արիովչին» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս,
17/1 շենք, բն.14
հեռ.՝ 093 955 295
Էլ. հասցեն՝ grigoryan.aramais@inbox.ru
ՀՎՀՀ 00110978

h/h 1150007143333380



Ա. Գրիգորյան

1-ին չափաքաժին**ՍԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ***

«ՀՀ Արագածոտնի մարզի Իրինդ համայնքի Սր Աստվածածին եկեղեցու ամրակայման, նորոգման և վերականգնման 2017թ. կատարվելիք աշխատանքներ					
N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավորի գին (հազար դրամ)	Ընդ. Արժեք (հազար դրամ)
1	2	3	4	5	6
1	Արտաքին ծանր տախտակամածի կապում և քանդում	մ ²	7,0	10,09	70,63
28	Լիցքի կատարում բարդ կրաշաղախով և խամքարով	մ ³	3,0	64,11	192,32
1	խորանի գմբեթարդի երկկոր քարերի նոր տաշ ու շար	մ ²	6,5	155,54	1011,01
2	Բարդ պրոֆիլավոր քիվերի վերաշար ել. 30սմ	մ ²	1,2	96,17	115,41
89	Կղմինդրից ծածկասալերի պատրաստում	մ ²	320,0	21,15	6769,42
90	Նույնի տակ լիցքի կատարում բարդ կրաշաղախով և խամքարով	մ ³	32,0	64,11	2051,45
97	Խնձորակի նոր տաղ ու շար սրբատաշ տուֆից	մ ²	2,5	222,94	557,35
98	Մետաղական կոփածո խաչի պատրաստում և տեղադրում	հատ	1	512,63	512,63
91	Հուշարձանի սալահատակի նոր տաշ ու շար տուֆից	մ ²	89,0	58,40	5197,26
92	Նույնի տակ լիցքի կատարում	մ ³	5,3	52,11	276,21
93	Բեմի ճակատի հարթ երեսապատի նոր տաղ ու շար	մ ²	1,8	75,99	136,78
94	Պարզ պրոֆիլավոր ուղղածից քիվի նոր տաղ ու շար ել. 15սմ	մ ²	0,8	127,70	102,16
95	Բեմի վրա լիցքի կատարում ցաննետավազային շաղախով	մ ³	4,5	52,11	234,51
96	Բեմի սալահատակի նոր տաղ ու շար տուֆից	մ ²	7,5	58,90	441,77
102	Սուրբ սեղանի պատրաստում և տեղադրում	մ ²	2,2	174,55	384,00
99	Մուտքի դռների պատրաստում և տեղադրում կաղնու փայտից	մ ²	7,8	429,60	3350,85
100	Փայտե պատուհանների շրջանակների պատրաստում և տեղադրում	մ ²	18,0	85,13	1532,33
101	Պատուհանների ապակեպատում 3մմ հաստ. ապակիով	մ ²	18,0	7,97	143,44
103	Դռների և պատուհանների կրկնակի պատում բուսայուղով	մ ²	26,0	1,79	46,50
88	Լանջերի վրա ծածկասալերի տակ թեթև խարամաքետոնով լիցքի կատարում	խմ ³	51,7	46,86	2422,68
2	Կատարված գետնախարիսխների և պատերի քարերի քայքայված հատվածների կցունման կատարում	դմ ²	1978,0	1,26	2501,28
3	Գետնախարիսխների և պատերի ստորին մասերի կարանախձուծում	մ	432,0	1,32	570,82
4	Նույնի կատարում եկեղեցու ներսում հյուսիս արևմտյան միակոր պատերի և հարթ պատերի վրա	մ	570,0	1,32	753,16
5	Բոլոր պատերի միջուկների դատարկ հատվածների սրսկում ճնշման տակ հատուկ բաղադրակազմի շաղախով	լ	600,0	1,82	1093,33

6	Շին աղբի և ազելորս հողի ձեռքով բարձում մեքենաները	մ²	12,2	0,85	10,37
7	Նույնը մեխանիզմով	մ²	100,0	1,04	104,06
8	Նույնի տեղափոխում մեքենաներով	տ	189,9	1,95	370,37
ԸՆԴԱՄԵՆԸ					30 952,1

* Կապալառուն աշխատանքները կատարում է «Արագածոտնի մարզի Իրինդ համայնքի Ար Աստվածածին եկեղեցու տարածքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Աշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Կազգեն Աարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,
հ/հ 900011012904

«Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար



Ա. Մուրադյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Արիովչին» ՍՊԸ
Հասցեն՝ «Ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս,
17/1 շենք, քն.14
հեռ.՝ 093 955 295
էլ հասցեն՝ grigoryan.aramais@inbox.ru
ՀՎՀՀ 00110978

հ/հ 1150007143333380

Տնօրեն



Ա. Գրիգորյան

2-րդ չափաբաժին

ՇԱՎԱԼԱԹԵՐԹ -ՆԱԽԱԿԱՇԻՎ*

«Արագածոտնի մարզի Բյուրական համայնքի Արտավազիկ եկեղեցու ամրակայման, նորոգման և վերականգնման 2017թ. կատարվելիք աշխատանքներ

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավորի գին (հազար դրամ)	Ընդ. Արժեք (հազար դրամ)
1	2	3	4	5	6
ԲԱՃԻՆ Ա. Նախապատրաստական աշխատանքներ					
1	Հուշարձանի տարածքում փլատակների մաքրում	մ²	84,00	9,36	786,21
2	Նույն հողի ետլիցքի կատարում և հարթեցում	մ²	25,00	1,26	31,38
3	Հուշարձանապատկան քարերի տեղափոխում մինչև 70 մ հեռավորության վրա	տ	48,00	5,70	273,75
4	Նույն քարերի փոշեզրկում և համարակալում	մ²	78,70	1,36	107,38
5	Փլատակների մաքրումից դուրս եկած ճարտարապետական քարերի չոր շար գետնի վրա	մ²	22,00	18,64	410,03
6	Հուշարձանի ներսում փլատակների մաքրում	մ²	18,00	18,64	335,48
7	Հուշարձանապատկան կոպտատաշ քարերի տեղափոխում մինչև 50 մ և դասավորում	տ	21,50	9,36	201,23
9	Հուշարձանական նոր բեկորների չափագրում և տեղադրում նախագծում	հատ	40	9,20	367,84
10	Ծանր տախտակամածի կապում և քանդում	մ²	121,50	9,97	1211,58
12	Կաղապարամածի կապում և քանդում գմբեթարդի համար մինչև 4 մ բարձրությամբ	մ²	0,81	41,10	33,29
12'	Եկեղեցու արևմտյին մասի պարապետի քանդում վերաշարում բազալտե քարերից	մ²	7,50	76,16	571,17
13'	Նույնի վերաշար	մ²	21,70	21,57	468,03

ՔԱՑԻՆ Բ. Վերականգնման աշխատանքներ					
13	Անկանոն շարվածքով /անկյուններում կանոնավոր/ արտաքին հարթ երեսապատի քանդում-վերաշարում կոպտատաշ տուֆից	մ ²	10,20	31,15	317,69
14	Ստիբատի քանդում-վերաշարում սրբատաշ տուֆից	մ ²	13,90	33,90	471,24
15	Անկանոն շարվածքով /անկյուններում կանոնավոր/ ներքին հարթ երեսապատի քանդում վերաշարում կոպտատաշ տուֆից	մ ²	4,20	31,15	130,81
16	Ներքին հարթ երեսապատի սրբատաշ քարերի քանդում վերաշարում	մ ²	1,40	33,90	47,46
17	Միակողմ թափի քարերի քանդում վերաշարում	մ ²	0,70	51,56	36,09
18	Կորագիծ տաշվածքով քարերի քանդում վերաշարում	մ ²	4,30	76,16	327,47
19	Տանիքի ծածկասալերի քանդում վերաշարում	մ ²	4,60	36,82	169,37
20	Ծածկասալերի վրադիր քարերի քանդում վերաշարում	մ ²	1,10	73,15	80,47
21	Հարթ երեսապատի վերաշար սրբատաշ տուֆից	մ ²	1,30	24,57	31,94
28	Անկանոն շարվածքով /անկյուններում կանոնավոր/ արտաքին հարթ երեսապատի նոր տաշ ու շար կոպտատաշ տուֆից	մ ²	5,70	59,64	339,95
29	Նույնի վերաշար /40 %-ի չափով/	մ ²	4,20	21,57	90,59
30	Հարթ երեսապատի նոր տաշ ու շար սրբատաշ տուֆից	մ ²	1,10	74,57	82,02
31	Պարզ պրոֆիլավոր ուղղագիծ քիվերի նոր տաշ ու շար սրբատաշ տուֆից	մ ²	1,80	126,26	227,26
33	Սուտքի որմնակամարների նոր տաշ ու շար սրբատաշ տուֆից	մ ²	3,60	134,58	484,49
37	Անկանոն շարվածքով /անկյուններում կանոնավոր/ ներքին հարթ երեսապատի նոր տաշ ու շար կոպտատաշ տուֆից	մ ²	1,80	59,64	107,35
38	Նույնի վերաշար /50 %-ի չափով/	մ ²	2,20	21,57	47,45
39	Ներքին հարթ երեսապատի նոր տաշ ու շար սրբատաշ տուֆից	մ ²	0,50	74,57	37,28
44	Բեմի բարդ պրոֆիլավոր ուղղագիծ քիվերի վերաշար /ել. 10 սմ	մ ²	0,90	83,40	75,06
45	Նույնի նոր տաշ ու շար /ել. 10 սմ	մ ²	0,40	195,08	78,03
73	Հին կրաշաղախի լիցքի քանդում հեռացում	մ ³	12,50	18,23	227,85
74	Նոր լիցքի կատարում խամքարով և բարդ կրաշաղախով	մ ³	12,20	195,84	2389,30
76	Պատերի ճաքերի մեջ հատուկ բաղադրակազմի շաղախի սրսկում քարծր ճնշման տակ /վազումով	լ	650,0	2,97	1933,30
ՔԱՑԻՆ Ե. Այլ աշխատանքներ					
99	Բարեկարգման համար գրունտի քանդում 4-րդ կարգի գրունտում ձեռքի գործիքներով	մ ²	39,60	5,29	209,64
100	Եկեղեցու սալահատակի քանդում վերաշարում	մ ²	25,10	21,43	537,92
101	Նույնի նոր տաշ ու շար սրբատաշ տուֆից հնի հեռացումով	մ ²	3,20	66,72	213,51
102	Նույնի լիցքի քանդում հեռացում	մ ³	7,20	21,90	157,68
103	Սալահատակի տակ բետոնե նախապատրաստական շերտի 15 սմ հաստությամբ	մ ²	7,20	57,67	415,24
104	Նույնի վրա բետոնի հարթեցնող շերտ 3 սմ հաստությամբ	մ ²	47,90	2,18	104,32
109	Տարածքի սալահատակի նոր տաշ ու շար սրբատաշ տուֆից	մ ²	37,00	57,96	2144,61
110	Նույնի տակ խճի նախապատրաստական շերտ	մ ²	11,40	18,29	208,53
111	Նույնի վրա բետոնի նախապատրաստական շերտ	մ ²	8,90	57,67	513,29
112	Նույնի վրա բետոնի հարթեցնող շերտ 3 սմ հաստությամբ	մ ²	63,00	2,18	137,21
1	Տարածքում մետաղական հովանոցի ապամոնտաժում	մ ²	18,00	0,13	2,41

	/3 0x3 0x2.0 մ չափերով 1 հատ				
2	Քետոնի լիցքի քանդում հեռացում	մ ³	1,50	10,82	16,23
3	Մետաղական դարպասի ապամոնտաժում /2.0x2.0 մ չափերով	մ ²	4,00	0,13	0,54
4	Մետաղական հովանոցի և դարպասի տեղափոխում 80մ	տ	0,85	9,36	7,96
5ա	Գրունտի փորում սյուների հիմքերի համար	մ ³	0,35	2,05	0,72
5բ	համքարաքետոն	մ ³	0,30	42,07	12,62
5գ	8x8 մետաղական սյան տեղադրում	մ	2,20	0,29	0,64
5դ	Ցանց -4.45մ	մ ²	6,80	0,98	6,65
5ե	5x5 մետաղական անկյունակի տեղադրում	մ	8,90	0,27	2,40
5զ	Մետաղական վրադիր լիստ 0.8x0.8 սմ	մ ²	0,06	5,39	0,35
ԸՆԴԱՄԵՆԸ					17 222,3

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Արագածոտնի մարզի Բյուրական համայնքի Արտավազիկ եկեղեցու տարածքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2.
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,
հ/հ 900011012912

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչությունում



Ս. Մուրադյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Արիովշին» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս,
17/1 շենք, քն.14
հեռ.՝ 093 955 295
Էլ հասցեն՝ grigoryan.aramais@inbox.ru
ՀՎՀՀ 00110978

հ/հ 1150007143333380
«Հայրենիք» ՍՊԸ

Տնօրեն՝



Գրիգորյան

4-րդ չափաբաժին

ՍԱՎԱԼԱԹԵՐԹ -ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատ համայնքի Թարգմանչաց եկեղեցու ամրակայման, երրորդման և վերականգնման 2017թ. կատարվելիք աշխատանքներ					
N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավորի գին (հազար դրամ)	Ընդ. Արժեք (հազար դրամ)
1	2	3	4	5	6
ԲԱԺԻՆ Ա. Նախապատրաստական աշխատանքներ					
1	Հուշարձանի տարածքի խոտածածկի քաղում-հեռացում	մ ²	100.0 0	0,82	81,86
ԲԱԺԻՆ Բ. Մեծ զանգվածների հետ կատարվելիք շին. աշխատանքներ					
Բ3 Մեծ զանգվածների սրբուշ երեսապատի քանդում վերաշարում /2-րդ վերաշարման փուլ					
1	Հարթ երեսապատի քանդում վերաշարում	մ ²	0,55	33,90	18,65
2	Կոր եզրագծով հարթ երեսապատի քանդում վերաշարում	մ ²	0,12	35,35	4,24
5	Անկյունային հարթ երեսապատի քանդում վերաշարում	մ ²	0,52	33,90	17,63
6	Կոր եզրագծով անկյունային հարթ երեսապատի քանդում վերաշարում	մ ²	0,32	35,35	11,31
7	Անկյունային միակող երեսապատի քանդում վերաշարում	մ ²	0,54	37,48	20,24
12	Թմբուկակիր կամարի մեծածավալ քարի քանդում	մ ²	0,80	45,19	36,15

	վերաշարում				
13	Արտաքին խորշերի, տրոմպների կոնական մակերևույթով կամարների քարերի վերաշարում	մ ²	0,80	79,51	63,61
14	Արտաքին խորշերի, տրոմպների կոնական մակերևույթով սեղանաձև եզրագծով քարերի վերաշարում	մ ²	0,21	54,07	11,35
ԲԱԺԻՆ 9. Ընդհանուր նախնական աշխատանքներ					
5	Մետաղական խողովակներից ինվենտարային արտաքին տախտակամածի կապում և քանդում	մ ²	36,5	1,27	46,41
6	Փայտե ներքին ոչ ինվենտարային տախտակամածի կապում և քանդում	մ ²	38,43	9,92	381,40
9	Պատուհանների կոնական մակերևույթով կամարների տակ կավարամածների կապում և քանդում մինչև 4 մ բարձրության (խորաններ, ավանդատուն, թմբուկ)	մ ³	0,90	40,98	36,88
11	Կամարների տակ կավարամածների կապում և քանդում 4մ-ից ավել բարձրության (թմբուկակիր խորաններ, նախախորաններ)	մ ³	4,46	59,06	263,41
12	3/4 խորշերի կամարների տակ կավարամածների կապում և քանդում 4մ-ից ավել բարձրության	մ ³	1,73	59,06	102,17
13	Արտաքին խորշերի տրոմպների տակ կավարամածների կապում և քանդում 4 մ-ից ավել բարձրության	մ ³	1,71	59,06	100,99
14	Ավանդատների թաղերի տակ կավարամածների կապում և քանդում 4 մ-ից ավել բարձրության	մ ³	5,62	56,82	319,34
15	Գմբեթաղների տակ կավարամածների կապում և քանդում 4մ-ից ավելի բարձրության	մ ³	5,18	59,06	305,93
ԲԱԺԻՆ 10. Սրբատաշ երեսապատի կցոնման և սոսնձման աշխատանքներ					
1	Հարթ միակող կոնական և երկկող մակերևույթով կոտրված բեկորների բարդ ուրվագծով կցոնումների կատարում	դմ ²	263,47	1,26	331,54
2	Միջին բարդության ճարտարապետական դետալների բարդ ուրվագծով կցոնումների կատարում	դմ ²	180,2	1,55	278,63
3	Բարդ պրոֆիլավոր ճարտարապետական դետալների բարդ ուրվագծով կցոնումների կատարում	դմ ²	21,0	1,93	40,55
4	Բարդ ուրվագծով կցոնումների համար բնաշափերի պատրաստում	մ ³	3,48	17,81	61,98
5	Կոտրված բեկորներ սոսնձում	մ ²	0,46	19,36	8,91
6	Կցոնվող պարզ բեկորների շար	մ ²	2,52	21,19	53,39
7	Կցոնվող միջին բարդության ճարտարապետական դետալների շար	մ ²	1,80	41,94	75,48
8	Կցոնվող բարդ ճարտարապետական դետալների շար	մ ²	0,21	61,75	12,97
ԲԱԺԻՆ 11. Խուշարձանապատկան բեկորների վերաշարման աշխատանքներ					
3	Հարթ երեսապատի վերաշար	մ ²	5,55	24,57	136,36
4	Թեք կամ կոր եզրագծով հարթ երեսապատի վերաշար	մ ²	1,52	26,02	39,54
5	Միակող երեսապատի վերաշար	մ ²	1,12	28,14	31,52
6	Կոր եզրագծով միակող երեսապատի վերաշար	մ ²	0,54	29,84	16,11
7	Անկյունային հարթ երեսապատի վերաշար	մ ²	2,09	24,57	51,35
8	Կոր եզրագծով անկյունային հարթ երեսապատի վերաշար	մ	0,14	26,02	3,64
9	Անկյունային միակող երեսապատի վերաշարում	մ ²	1,04	28,14	29,27
11	Ուղղագիծ պարզ պրոֆիլավոր որմնախոյակների քարերի վերաշար ել.6 սմ	մ ²	0,15	63,36	9,50
12	Ուղղագիծ պարզ պրոֆիլավոր անկյունային որմնախոյակների քարերի վերաշար ել.6 սմ	մ ²	0,59	63,36	37,38
13	Կորագիծ պարզ պրոֆիլավոր անկյունային որմնախոյակների քարերի վերաշար ել.6 սմ	մ ²	0,79	63,36	50,05
16	3/4 խորշերի լուսնակաձև եզրագծով որմնակամարների քարերի վերաշար	մ ²	0,20	57,46	11,49
17	3/4 խորշերի կոնական մակերևույթով, ուրվող երեսով որմնակամարների քարերի վերաշար	մ ²	0,24	57,46	13,79
18	Կամարների քարերի վերաշար (գմբեթաղներ և	մ ²	1,99	54,11	107,67

	նախախորաններ)				
